Հավելված
ՀՀ կառավարության 2014 թ.
հոկտեմբերի 16-ի նիստի N 43
արձանագրային որոշման

ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՈՒՇԱԳԻՐ

_____ _____-ի, երկու հազար տասնչորս թվական
Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ տեքստում կհիշատակվի որպես Կառավարություն), որի անունից հանդես է գալիս _____,

«Քրոնիմետ Մայնինգ» բաժնետիրական ընկերությունը (այսուհետ տեքստում կհիշատակվի որպես նաև Քրոնիմետ)՝ ի դեմս Օպերատիվ տնօրեն պարոն Միեր Պոլոսկովի,

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային Կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ տեքստում կհիշատակվի որպես ԶՊՄԿ)՝ ի դեմս գլխավոր տնօրեն պարոն Նիլ Ստիվենսոնի,

VSEI ձեռնարկությունների խումբը (այսուհետ տեքստում կհիշատակվի որպես Ներդրող)՝ ի դեմս պարոն Եվգենի Գիննների,

«ԱԼՅՈՏԻԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ տեքստում կհիշատակվի որպես Ընկերություն)՝ ի դեմս հիմնադիր՝ միակ մասնակից, պարոն Վարդան Շահնազարյանի և գլխավոր տնօրեն պարոն Մանվել Ոսկանյանի,

(Կառավարությունը, Քրոնիմետը, ԶՊՄԿ-ն, Ներդրողը և Ընկերությունը այսուհետ տեքստում կհիշատակվի որպես Կողմեր)

Հաշվի առնելով, որ՝

- Ընկերությունը ունի տեխնոլոգիական մշակումներ, որոնք վերաբերում են մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերում (պոչամբար) կատուկված և կուտակվող ապարների արդյունավետ մշակմանը, և այդ տեխնոլոգիաների նկատմամբ իրավունքները պատկանում են Ընկերությանը.
- Ընկերությունն արդեն ներդրումներ է կատարել նշված տեխնոլոգիայի մշակման համար և պատրաստակամ է շարունակել ու խորացնել այդ ծրագիրը՝ Հայաստանի Հանրապետությունում կառուցելով և

շահագործելով մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերում (պոչամբար) կուտակված ապարների վերամշակման գործարան (այսուհետ՝ նաև Ծրագիր).

- Քրոնիմետը և ԶՊՄԿ-ն մտադրություն ունեն համագործակցելու Ընկերության հետ ծրագրի իրականացման հետ կապված հարցերում, ինչի շուրջ ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ.
- Ընկերությունը երաշխավորում է, որ Ծրագիրը որևէ կերպ չի խոչընդոտի ԶՊՄԿ-ի բնականոն գործունեության իրականացմանը և վերջինիս համար չի առաջացնի լրացուցիչ պարտավորություններ.
- Ծրագրի մեկնարկի համար անհրաժեշտ է համապատասխան իրավական ակտերի ընդունմամբ լիարժեք կերպով կարգավորել Հայաստանի Հանրապետության տարածքում մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերում (պոչամբար) կատուկված և կուտակվող ապարների մշակման հետ կապված հասարակական հարաբերությունները.

Կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. Կառավարությունը, Քրոնիմետը, ԶՊՄԿ-ն, Ներդրողը և Ընկերությունը վերահաստատում են իրենց մտադրությունը և համաձայնվում համագործակցել Ծրագրի իրագործման հարցում:

2. Ներդրողը հավաստում է, որ Ծրագրի իրականացման համար արդեն իսկ կատարել է և շարունակելու է կատարել անհրաժեշտ ներդրումները, որոնց չափը կազմելու են առնվազն 200 (երկու հարյուր) միլիոն ԱՄՆ դոլար: Դա ներառում է վերամշակման գործարանի նախագծումը, կառուցումը և շահագործման սկիզբը: Հետագայում, Մաստեր պլանով նախատեսված և անհրաժեշտ գումարները կշարունակեն ներդրվել՝ ապահովելու համար ծրագրի լիարժեք իրագործումը՝ Ներդրողի կողմից սահմանված և Ընկերության հետ համաձայնեցված կարգով և պայմաններով:

3. Ծրագրի իրականացման համար էական նշանակություն ունի, որ Ընկերությունը դառնա Ողջիի և Փուխրուտի կոնսերվացված (իսկ կոնսերվացումից հետո՝ նաև Արծվանիկի) արտադրական լցակույտերի սեփականատեր՝ առանց, այդ թվում, ԶՊՄԿ-ին հատուցում տրամադրելու՝ պայմանով, որ նշված արտադրական լցակույտերը փոխանցելու գործարքը հարկային, բնապահպանական, տեխնիկական անվտանգության կամ այլ պարտավորություններ և ռիսկեր չառաջացնի ԶՊՄԿ-ի համար:

4. Քրոնիմետը և ԶՊՄԿ-ն հաստատում են, որ արտադրական լցակույտերի նկատմամբ իրավունքների փոխանցման դիմաց որևէ ակնկալիք չունեն՝ 3-րդ կետում նշված պայմանների առկայության դեպքում:

5. Կողմերը համաձայնվում են, որ արտադրական լցակույտերի (պոչամբար) և դրանց ենթակառուցվածնքների համար ամբողջ պատախանատվությունը (ներառյալ՝ դրանց պահպանման և շահագործման համար նախատեսված պահանջները պահպանելու, բնապահպանական կամ այլ վճարներ կատարելու, ռեկուլտիվացիայի պարտավորությունները,) անցնում է Ընկերությանը՝ դրանց նկատմամբ բոլոր իրավունքները վերջինիս կողմից ձեռք բերելու պահից: Ընկերությանը փոխանցված արտադրական լցակույտերի (պոչամբարներ) հետ կապված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ԶՊՄԿ-ի կողմից կատարված հատկացումների հետագա տնօրինման վերաբերյալ հարցերը ևս Կողմերի քննարկումների օրակարգում են:

6. Քրոնիմետը և ԶՊՄԿ-ն պատրաստակամություն են հայտնում թույլատրել Ընկերությանը դեպի Արծվանիկի պոչամբար տանող պոչատարից անհատույց վերցնելու հնարավոր քանակի արտադրական լցակույտի զանգված՝ փոխադարձ համաձայնեցված կարգով օգտագործելով նաև ԶՊՄԿ-ի համապատասխան ենթակառուցվածքները՝ կրելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ նշված ենթակառուցվածքների շահագործումից բխող ամբողջ պատասխանատվությունը, և պայմանով, որ նշված արտադրական լցակույտերը փոխանցելու գործարքը հարկային, բնապահպանական, տեխնիկական անվտանգության կամ այլ պարտավորություններ և ռիսկեր չառաջացնի ԶՊՄԿ-ի համար:

7. ԶՊՄԿ-ի ենթակառուցվածքների՝ Ընկերության կողմից օգտագործման դեպքում ենթադրվում է հատուցելիություն:

8. Քրոնիմետը և ԶՊՄԿ-ն համաձայնվում են արտադրական լցակույտերի նկատմամբ իրավունքները փոխանցելու նպատակով բանակցություններ չվարել այլ անձանց հետ, քանի դեռ Կողմերը բանակցում և համագործակցում են Ծրագրի իրականացման հետ կապված հարցերի շուրջ:

9. Ընկերությունը վերահաստատում է իր պատրաստակամությունը վերը նշված արտադրական լցակույտերի (պոչամբար) տարածքները վերադարձնել ԶՊՄԿ-ին՝ դրանցում առկա ապարների կուտակումները

հնարավոր չափով վերամշակելուց հետո՝ պատշաճ կերպով վերականգնելով ԶՊՄԿ-ից Ընկերությանը փոխանցման պահին դրանցում առկա բոլոր ենթակառուցվածքները:
Միաժամանակ, Ընկերությունը պատրաստակամ է ֆինանսապես օժանդակել ԶՊՄԿ-ին՝ նոր արտադրական լցակույտերի կառուցման հարցում:

10. Ծրագրի այն բոլոր հատվածները (ներառյալ նախագծային լուծումները և միջոցառումները), որոնք որևէ առնչություն ունեն կամ կարող են ունենալ ԶՊՄԿ-ի ենթակառուցվածքներին և/կամ արտադրական գործընթացներին, կամ կարող են որևէ ազդեցություն ունենալ դրանց վրա, նախապես համաձայնեցվում են ԶՊՄԿ-ի հետ:

11. Ծրագրի արդյունավետության հարցը չի վերաբերում ԶՊՄԿ-ին և Քրոնիմետին: Ծրագրի արդյունավետ իրականացման համար ամբողջ պատասխանատվությունը և ռիսկերը կրում են Ներդրողը և Ընկերությունը՝ իրենց ստանձնած պարտավորություններին համապատասխան: Միևնույն ժամանակ Կողմերը համաձայնվում են գործադրել հնարավոր ողջամիտ բոլոր ջանքերը՝ Ծրագրի հաջող իրականացման համար:

12. Ընկերությունը երաշխավորում է, որ Ծրագիրը կիրականացվի սահուն և պատշաճ կերպով, կձևավորվեն ժամանակակից ենթակառուցվածքներ, որոնք համապատասխանում են անվտանգության, աշխատանքի անվտանգության, բնապահպանական և սահմանված այլ պահանջներին:

13. Եթե կառաջանան ենթածրագրեր, որոնցում ԶՊՄԿ-ն հետաքրքրված կլինի կամ անհրաժեշտություն կառաջանա ձևափոխել կամ վերազինել ԶՊՄԿ-ի ենթակառուցվածքները (Ծրագրի իրականացմանը նպաստելու նպատակով), ապա կքննարկվի համատեղ ֆինանսավորման հնարավորությունը:

14. ԶՊՄԿ-ն որևէ կերպ կաշկանդված չէ Ծրագրի իրականացման հանգամանքով և ազատ է ընդերքօգտագործման (այդ թվում՝ հանքաքարի հարստացման) ծավալների փոփոխության, տեխնոլոգիաների ընտրության, դրանց զարգացման և այլ հարցերում:

15. Ծրագիրը կիրագործվի Մաստեր պլանի հիման վրա, որը կներառի նաև բիզնես պլանը՝ գործողությունների ծրագրի և ժամկետների նշումով, և կներկայացվի Կառավարությանը մինչև _____ թվականի _____ամիսը:

16. Ընկերությունը և Ներդրողը պատրաստակամ են սեփական նախաձեռնությամբ իրականացնելու տեղական ու հանրապետական սոցիալական և բնապահպանական ծրագրեր, և/կամ միանալու ու համատեղ իրականացնելու այդպիսիք, այդ թվում որոնք արդեն իսկ սկսել ու իրականացվում են ԶՊՄԿ-ի կողմից:

17. Մինչև 2014 թվականի_____-ը Կողմերը կձևավորեն աշխատանքային խումբ՝ Մաստեր Պլանի իրագործման համար անհրաժեշտ նոր իրավական ակտեր ընդունելու վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելու նպատակով՝ մասնավորապես, կապված մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում առաջացած և առաջացող լցակույտերի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման, դադարման, փոխանցման (դատարկ տարածքների հետ վերադարձման), այդ լցակույտերի հետագա շրջանառության, պահպանության, վերամշակման և վերամշակման լիցենզավորման հարաբերությունների, ինչպես նաև հարակից այլ հարաբերությունների իրավական կարգավորման հետ:

18. Աշխատանքային խմբի առաջարկությունների հիման վրա Կառավարությունը կնախաձեռնի, որ սահմանվեն այնպիսի իրավական կարգավորումներ, որոնք կբացառեն ԶՊՄԿ-ի համար հարկային պարտավորությունների և այլ ռիսկերի առաջացումը՝ կապված արտադրական լցակույտերի (դրանց նկատմամբ իրավունքների) փոխանցման (դատարկ տարածքների հետ վերադարձման) գործարքի հետ, և Ընկերության համար լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջացումը (բացառությամբ այն պարտադիր վճարների, տուրքերի և հարկերի, որոնք ուղղվում են համայնքային բյուջեներ)՝ կապված արտադրական լցակույտերի (դրանց նկատմամբ իրավունքների) ձեռք բերման, վերամշակման, պահպանության հետ:

19. Սույն հուշագրով նախատեսված աշխատանքների համակարգման նպատակով Կառավարությունը կնշանակի Պատասխանատու անձի, ով կապող օղակ կհանդիսանա Կառավարության և Կողմերի միջև, կհամակարգի օրենսդրական փոփոխությունների վրա աշխատող համատեղ Աշխատանքային խմբի գործունեությունը:

20. Սույն հուշագրով Կողմերը արտահայտում են իրենց վերաբերմունքը Ծրագրի նկատմամբ: Կողմերից յուրաքանչյուրը ստորագրում է սույն

հուշագիրը իր իրավասությունների շրջանակներում՝ ի հաստատումն իր կողմից արտահայտված մտադրությունների:

21. Սույն հուշագիրը կազմված է հայերեն, անգլերեն և ռուսերեն՝ յուրաքանչյուր լեզվով հնգական օրինակ: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է սույն հուշագրի մեկական օրինակ՝ յուրաքանչյուր լեզվով:

Հայաստանի Հարնրապետության
կառավարություն

_____

«Քրոնիմետ Մայնինգ»
բաժնետիրական ընկերություն

Օպերատիվ տնօրեն
Միեր Պոլոսկով _____

VSEI ձեռնարկությունների խումբ

Եվգենի Գիներ

_____

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային
կոմբինատ» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն
Նիլ Ստիվենսոն _____

«ԱԼՅՈՏԻԳ» ՍՊԸ
Հիմնադիր՝ միակ մասնակից
Վարդան Շահնազարյան _____

Գլխավոր տնօրեն
Մանվել Ոսկանյան _____